ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

„ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ„ ՀՈԱԿ

Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Վ. Զորավարի 35
Հեռ. /0281/2-31-51

05 2 մայիսի 2022թ.

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն
Մանե Հասանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Տեղեկացնում ենք, որ 2022 թվականի -ին «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Շամս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է սննդամթերքի մատակարարման N ՎՁՄ-ԵՀԹ5Մ-ԳՀԱՊՁԲ-22/Ս Պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ:

Սակայն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից առ այսօր «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որևէ սնունդ չի առաքվել, Ձեր կողմից չի կնքվել մատակարարման համաձայնագիր, Ձեր կողմից աղերսված լրացուցիչ ժանկետները Ձեր անպատասխանատու և ապօրինի աշխատանքի հետևանքով թողնվել են անհետևանք՝ մանկահասակ երեխաների միջազգային և սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով սննդամթերքի մատակարարման N ՎՁՄ-ԵՀԹ5Մ-ԳՀԱՊՁԲ-22/Ս պայմանագրի 2.1.7 կետը մենք որպես գնորդ միակողմանի լուծում ենք պայմանագիր: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ձեռնարկվելու են պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ՝ պայմանագիրը

միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:

Ձեր ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները «Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու համար:

«Եղեգնաձորի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Գոհար Պողոսյան